ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ 2017-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (այսուհետ՝ Նախագիծ) (Կ-250-29.04.2022-ՏՀ-011/0)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ կետ	Առաջարկում ենք Հաշվետվության 3-րդ կետում «4-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «2-րդ մասի» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17- րդ հոդվածի 4-րդ մասը, այն է՝ «Հղումները կատարվում են հստակ և ուղղակի:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
3	ՀՀ կառավարություն	1) Նախագծի 4-րդ, 13-րդ և 14-րդ կետեր	Հաշվետվության 2-րդ կետում 2021 թվականի օրացուցային տարին ընդգրկող հաշվետվության համար նախատեսվում է կիրառել «այսուհետ՝ Հաշվետու ժամանակահատված» եզրույթը, մինչդեռ նույն հաշվետվության մի շարք կետերում կիրառվում են «Հաշվետու ժամանակաշրջան» եզրույթները: Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք սահմանել նույն հասկացությունները՝ հիմք ընդունելով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:

			«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը, այն է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:		
3	ՀՀ կառավարություն	Նախագծի 5-րդ կետ	Միաժամանակ առաջարկում ենք Հաշվետվության 5-րդ կետում կիրառված «Հանրապետության» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 14-րդ կետ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի:»: Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հաշվետվության մի շարք կետեր կազմված են միայն մեկ համարակալված ենթակետից՝	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:

			առաջարկում ենք Հաշվետվության 14-րդ կետից հանել համարակալված պարբերության համարը:		
5	ՀՀ կառավարություն	Նախագծի 16-րդ կետ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը:»: Նախագծին կից ներկայացված հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) 3-րդ կետում որպես «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի կրճատ տարբերակ կիրառվել է «(այսուհետ՝ Ծրագիր)» եզրույթը, մինչդեռ Հաշվետվության 16-րդ կետում նույն օրենքի համար որպես կրճատ տարբերակ չի կիրառվել «Ծրագիր» եզրույթը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:

			Ոստի առաջարկում ենք Նախագծի 16-րդ կետում ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքի» բառերը փոխարինել «Ծրագրի» բառով կամ Հաշվետվության 3-րդ կետում «այսուհետ՝» բառից և կետադրական նշանից հետո լրացնել «նաև» բառը:		